

Ոհ՛ - Աստուած իմ - ի՛նչ ըղեղ էր ատիկա,  
Որ Տիեզերքին քամեց երակը համայն.  
Յենած մարդուն, ճառագայթին, խաչին վրայ,  
Գըրկեց Այրին՝ զոր կը կոչեն. Յայաստան:

#### Գ

Արծի՛ւ, որ մռայլ ամպերն հրեղեն բիբերով  
Խորտակեցիր, մութին սառերն հալեցան.  
Արծի՛ւ, որ մեր հոգին կարշնեղ ճապուռով  
Բարձրացուցիր, չափեցիր մեր ապագան:

Ձինչ հայլի մ'ես՝ ուրտեղ ամեն մարդ կըրնայ  
Գըտնել դիտել պատկերն իր ճիշտ, հարազատ.  
Նըւագներուդ մէջ երբեմն ես քրիստոնեայ,  
Չինուոր երբեմն, երբեմն մոգ, միշտ Սոկրատ:

Եւ քու կեանքիդ ու երգերուդ մէջ ամեն  
Դու բանաստեղծ Նահապետն ես հոգեհմայ.  
Բորբ Արշալոյս մ'ես որ կ'ելլայ ովկիանէն.  
Ամպէն, մութէն՝ կը սըփռի Մարդուն վրայ:

Այն արշալոյսն որ իր մտածման հետ անանց  
Սեւ սըքեմով մ'ամբողջապէս պատուած է.  
Եւ բոցէ գլո՛ւխը սեւ գըտակ մ'է դըրած.  
Գիշրուան մէջ երկինքն եւ էլ չըքնաղ չէ՞...  
Մինչ այգ կ'ըլլայ օրէ օր շիթըդ լոյսի  
Սա ջուրերէն անդի՛ն, անդի՛ն լեռներէն.  
Մինչ սերմիդ հունձքն ալիք ալիք կը նագի,  
Եւ արիւնով, լացով խայրի կը կապեն:  
Դու կը նընջե՛ս, վինըդ՝ բարձ, փառքըդ՝ վերմակ,